ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 19 սեպտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Աղասի Տեր-Եսայանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Աղասի Տեր-Եսայանը 01.09.2016թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը, 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը ճանաչել ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով 06.12.2015թ.) 1-ին, 61-րդ, 63-րդ, 79-րդ և ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով 27.11.2005թ.) 92-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթներից՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում առկա «դատարանի վճռով» արտահայտությունը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ, ըստ նախապատմության՝ դիմողը, հիմք ընդունելով իր նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած՝ ՀՀ վարչական դատարանի կարճման վճռով հաստատված փաստերը

և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը՝ որպես նախադատելի փաստ հանդիսացող ու այլևս ապացուցման կարիք չունեցող, իրավունքի ուժ ունեցող հանգամանք, դիմել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և որպես փաստական հանգամանք նշել վարչական դատարանի՝ վերոհիշյալ կարճման վճռով հաստատված փաստերի առկայությունը: Սակայն դատարանները՝ մերժելով պահանջը, նշել են, որ տվյալ վճիռը կարճման է: Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթի «դատարանի վճռով» արտահայտությունը բավարար չափով հստակ չէ և հնարավորություն չի տալիս դիմողին կանխատեսել իր գործողությունները, իսկ իրավակիրառողին տալիս է այնպիսի մեկնաբանության հնարավորություն, որով խախտվում է անձի՝ արդար դատաքննության իրավունքը:

Վիճարկվող դրույթներից՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի վերաբերյալ դիմողը նշում է, որ վճռաբեկ դատարանին ներկայացրած՝ օրենքի պահանջներին համապատասխանող իր բողոքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ թեև բողոքում վկայակոչված են վճռաբեկ դատարանի որոշումները և մեջբերված են դրանց և բողոքարկվող դատական ակտի ենթադրյալ հակասությունները, սակայն կատարված չէ «բավարար համեմատական վերլուծություն»: Ըստ դիմողի՝ օրենսդիրը չի հստակեցրել, թե որոնք են համեմատական վերլուծության կատարման պայմանները և չափանիշները:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի մասով և 52-րդ հոդվածի 2-րդ մասով գործի քննության ընդունումը մերժելու հիմքեր առկա չեն, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,

- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 և 69-րդ հոդվածներով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Աղասի Տեր-Եսայանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի, 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

19 սեպտեմբերի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/2-26